մռայլում մը, որ արիւնոտ սիրտը կը խոցէ. և յոյն օրիորդի մը շրթերէն կաթկթող մէն մի յստակ ու հայու իսկական հնչումը կրող բառերէն մարդս կախուած կը մնայ և առանց ուզելու կարտասուէ.

Կը լռենք Տիկ. Նաքարեանի, Տ. Տ. Յակոբեանի, Բիւչիւքեանի և Սեփոնի մասին.

Մուրաս-Սոկրաս

## ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Վահան վարդապետը չի ուզեր Պուլկարիա գալ, կուզէ Արշարունի եպիսկոպոսը, որ Պաւրաայի առաջնորդ է և չի ուզեր հոն մընալ.

—Բագրատ Խալաթեանը մտադիր է Բէրլինի մէջ հայկական ցուցահանդէս մը կազմակերպել.

—«Վեսելօ» խումբ բաւական յաջող կերպով անցուց իր ներկայացումը ի նպաստ Վառնայի գործադուլ ընող բանւորներուն. կըսեն թէ մօտ 150 լեւ զուտ հասոյթ մնացեր է, չը նայելով որ տոմսակ միայն մէկ օր ծախուեցաւ.

—Ամերիկայի «Հայրենիք» թերթը յաւելուածով մը հրատարակած է վերակազմեալներէն մէկ հումը գրութիւնը, որուն մէջ կը մերկացուի այդ կազմակերպութեան ներքին այլանդակութիւնը. յօդուածագիրը իր ընկերները կը հրաւիրէ կազմակերպութիւնը ազատել անկոչ և անարժան կեդրոնի ձեռքերէն.

—Պոլսոյ «Փունջ» շաբաթաթերթին մէջ Վառնայէն յօդուած մը կայ որուն մէջ կը յայտնուի թէ Վառնայի Որբախնամը իր մօտ հաւաքած դրամները, բաւական խոշոր գումար մը, մինչեւ օրս չէ ուղարկած իր տեղը. Այդ մասին միւս անգամ կը խօսինք.

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՏԱՃԿԱՍՏԱՆ? ԹՈՒՐՔԻԱ

Ֆիրմիլեանի օծումը կրկին յետաձգուած է. թոյլ չեն տուեր որ Աթոնի ռուսական վանքին մէջ օծուի.

Ուրիշ տեղ մը պիտի ղրկուի օծուելու.

—Պուլկարիոյ Պոլսոյ գործակատարը պարոն Նէչէֆ շապպով Սոֆիա կանչուած է.

—«Բարի Նուէլ» Վիէննայէն կիմանայ որ Պոլսոյ մէջ Սուլթանի դէմ դաւադրութիւն մը բացուեր է. դաւադիրներուն նպատակը եղած է Սուլթանը սպաննել և գահը բարձրացնել իր հօրեղբօր որդին, Սայիտ Էթհէմը.

Սայիտ Էթհէմը այժմ ձերբակալուած է և յայտնի չէ թէ ինչ եղած է.

### ՊՈՒԼԿԱՐԻԱ

Փոխառութեան նախնական պայմանները ստորագրած են. 81½ էմիսիա. 50/0, և ծխախոտի պանտէրոլի երաշխաւորութեամբ.

—Սօֆիայի թերթերը կը գրեն որ տէմօկրատներու կուսակցութեան, որուն պարագլուխը Քարավէլօֆն է, պառակտումը անխուսափելի է.

### ՌՈՒՍԻԱ

Վարշավայէ Պերլինի թերթի մը կը գրեն որ Խարքովի նահանգապետ իշխան Օպոլէնսքիի մահացու կերպով վիրաւորուած է յեղափոխականներէն. բայց կառավարութիւնը այդ դէպքը գաղտնի կը պահէ.

—Պաշտօնական թերթը կը յայտարարէ որ այսուհետեւ արգիլուած է 20 նահանգներու, ուր խըռովութիւններ տեղի ունեցան, Սթաթիստիքական տեղեկութիւններ հաւաքելու համար մարդիկ ղրկել, առանց բարձրագոյն իշխանութեան գիտութեան, որովհետեւ մինչեւ հիմա տեղեկութիւններ հաւաքելու պատրուակով յեղափոխականներ տ. բաժուեր են գիւղացիներուն մէջ.

—Բալտավայի գինւորական նահանգապետը և քանի մը սպաներ, մարդիկ գինուորագրութենէ ազատելու համար կաշառք առնելու մէջ մեղադրուելով, ձերբակալուեր են. Այդ ձերբակալութիւնները մեծ յուզում առաջ բերած են ամբողջ Ռուսիոյ մէջ.

—Տօլսթոյ առողջացած ըլլալով պիտի տեղափոխուի իր կալուածքը.

### ԻՏԱԼԻԱ

Աւստրիական պաշտօնական թերթ մը կը հաղորդէ որ Իտալական կառավարութիւնը բոլորովին պիտի վերակազմէ իր նաւատորմիղը, որովհետեւ հաստատուած է թէ՛ մեծ քանակութեամբ նաւեր անպէտք դարձած են և չեն կրնար ղրկուիլ օտար ջուրեր.

### ՅՈՒՆԱՍՏԱՆ

Քօսթէյօնցէի մէջ մեծ հանդէսով արձանը՝ բացուեր է այն Իտալացիներուն, որոնք վերջին յոյն-թրքական պատերազմի միջոցին սպաննուեցան Դոմակօսի քով.

Յոյն կառավարութիւնը թոյլատրած է որ յունաստ Ֆրատելի ածիւնները Իտալիա փոխադրուին.

### ԹՐԱՆՍՎԱԱԼ

Անգլիական կառավարութիւնը արդէն հրամայած է որ Ս. Հելինէ կղզիին պօէր գերիները Թրանսվալ վերադարձուին. Ժէնէրալ Քրօնժէի վերադարձը շուտով կը սպասուի.

—Կըսեն թէ Ժէնէրալ Պօթա Անգլիա եկած միջոցին թագաւորէն տեսակցութիւն պիտի խնդրէ.

—Թրանսվալի Եւրոպայի մէջ գտնուած պաշտօնեաներր դեռ պաշտօնական տեղեկութիւններ չեն ընդունած հաշտութեան մասին.

### ԱՆԳԼԻԱ

Թագաւորը կազդուրուեր է և մեծ շքով Լօնտօն վերադարձեր է. Ժողովուրդը մեծ ոգեւորութեամբ ընդուներ է թագաւորը, որ բոլորովին առողջ կերեւնայ եղեր.

—Զանազան արքայական տներու ներկայացուցիչները արդէն Լօնտօն հասած են.


## ☛ ԹԱՏՐՈՆ „ՊՕՐԻՍ“

Հաճի Բանաֆօ
Ամառնային շրջան
«ՎԷՍԷԼՕ»
Հայ դերասանական խմբի
այս գիշեր ժամը 9ին պիտի ներկայացուի

ԼԵՊԼԵՊԻՃԻ
☛ ԽՕՐ—ԽՕՐ ԱԿԱ

Օբերա 3 արարուած
Երաժշտութիւն Տ. Չուխաճեանի

ԵՐԳ ԵՒ ՊԱՐԵՐ
Պ.Գ. Յակոբեանի եւ Օր. Րօզալիի կողմէ

ՊԱԼԷԴ
Օրիորդ Բարասֆօյի կողմանէ

խիստ ծիծաղաշարժ զաւեշտ մը

Վաղը կիրակի գիշեր պիտի ներկայացուի

ՈՐԴԵՍՊԱՆ ՀԱՅՐԸ

բարոյալից տրամ 1 արար
միջկենդանի պատկեր

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՋԱՏԻԿԸ
խմբերգ 1 արար

ԿՕՇԿԱՐ ՄԱՐԴԸ
զաւեշտ 3 արարուած

Մօտօրէն պիտի ներկայացուի Թրանսվալի ներկայ պատերազմը թատերախաղ պատմական զանազան տեսարաններով.

Փորձի սրուած է Կոմս Մոնթէ—Քրիսթօ. երեք երեկոյթի բաժնուած է.

## ☛ ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ☚

Ֆրանսայի նշանաւոր վիպասաններէն ՌԸՆԷ ՏԸ ՊՕՆ-ԺԷԻ հեղինակութիւնը եղող

ԱՆՁՆԱՍՊԱՆ ՄԵՌԵԱԼԸ

անուն խիստ հետաքրքրաշարժ եւ բարոյալից վէպին

Հինգերորդ եւ Վեցերորդ թերթերը

Ամեն դասակարգի դիւրամատչելի ըլլալու համար, գիրքը մասամբ, 8ական երեսներէ բաղկացեալ, շաբաթը երկու թերթ պիտի հրատարակուի և իւրաքանչիւր 8ական երեսը պիտի ծախուի 5 սանթիմի:

Ամբողջ գիրքը 24-25 թերթերէ պիտի բաղկանայ:

Վառնայի համար բաժանորդագին 1 Ֆր.: Արտաքին քաղաքներու եւ արտասահմանի 1.20:

Վառնայէ դուրս, Պուլկարիոյ համար երեք թերթ մէկ ծրարով կը ղրկուին, իսկ արտասահմանի համար հինգ թերթ մէկ ծրարի մէջ. փոստի ծախքը հրատարակչին վրայ է:

Դիմել հետեւեալ հասցէին՝ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏՊԱՐԱՆ, ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ, ՎԱՌՆԱ:

Դրամի փոխարէն նամականիշ ալ կընդունուի:

ԱՆՈՒՇԱՒԱՆ

## ՀԱՅԻ ՀԱՄԱՐ

կամ

ԱՂՋԿԱՆ ՄԸ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Վէպ մը իրական կեանքէ
Մամլոյ տակ

Այս վէպը որ կը պարունակէ իր մէջ տեղական կեանքէ զանազան պատկերներ. հրատարակութեան յանձնուած է հեղինակին կողմէն և սիրով պիտի ընդունուին բաժանորդներ հրատարակութեան դիւրութիւն ընծայուելու համար.

Բաժնեգինն է 1 ֆրանք. ռօսթի ծախքը հրատարակչին վրայ.

Ծպագրութիւնը աւարտելուն գրքերը կը յանձնուին բաժանորդներուն.

Գոյանալիք հասոյթը ամբողջովին կը նուիրուի «Հայկական Կարմիր Խաչի» ընկերութեան.

Բաժանորդագրութեան համար դիմել հետեւեալ հասցէին.

Մուրաս Երանոսեան

(Պուլկարիա) ՎԱՌՆԱ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

—o—

«ԲԱՐԿԷՆ ՍԻՒՆԻ» ընթերցարանի մէջ կը ծախուի Աստղ Սարգսեանի "Իրիցագնորէնքը ի նպաստ Հայ Ուսանողական Միութեան.

Գինն է 1 լէֆ արծաթ.

Կը ծախուի նաեւ «Պարիսի Ազատութեան Ճանապարհին».

Գինն է 90 սանթիմ

Վառնա



Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность" — Варна